4- Առաջնորդարանի շինութեան խնդիրն ։

5. Սաղիանի վանքի վանական դպրոցի խնդիրն ։

6. Սաղիանի վանքի շինութեանց թերութեան խնդիրն։

7. Բագուայ եկեղեցական և երեսփոխանական հաշիւներն։

8. Բագուայ ժողովրդոց ծխաբաժանութեան խնդիրն ։

9. Մատրասայ , Մէյսարի և Գիրք գիւղերի դպրոցաց օժանդակութեան խնդիրն ։

10. Անձնական տկարութեանս փարատումն ։

Այս խնդիրների քանիսը այլում յարմար միջոցի թողլով՝ ըստ խորհրդոյ իշխանաց , մնացածը կատարել յաջողեցրեցի , զոր օրինակ ։

1. Ս. Էջմիածնի շինութեան հանգանակութեան համար չորս առաջաւոր իշխաններից կազմելով մանաժողով՝ հրաւիրեցի սկսել հանգանակութիւնն , որոյ անդամք են պ. Յակոբ Ադամեանց , պ. Գրիգոր Թումայեանց , պ. Առաքել Ծատուրեանց և պ. Յակոբ Ապրիսեանց , որոց հետ և գործակալ Խորէն Աւագ քահանայն ։

Այս ժողովը հաստատեց Վեհափառ Տէր Մակար Կաթուղիկոսը յամսեանն հոկտ. 1888 . այցելութեամբ ի Բագու գրտնուելով և ներկայօրէն տեսնելով և օրհնելով յիշեալ պարոնայց՝ որք և յարմար առիթ ունելով Կաթուղիկոսի ներկայութիւնն՝ հանգանակեցին երբորդ օրն 10,000 ռուբլի և նուիրեցին նորին վեհափառութեան ի նպաստ նորոգութեան տաճարի Ս. Էջմիածնի , խոստանալով այլ ևս շարունակել հանգանակութիւնն , և շարունակում են ամենայն սիրով և ջերմեռանդութեամբ ։

2. Զամախւոյ թեմական դպրանոցի շնորհեալ իրաւունքն և արտօնութիւնը չկորցնելոյ համար՝ մեր խորհրդակցութեան հետեւանքն այն տեղ հասաւ , ըստ որում Զամախի քաղաքի եկեղեցիքն և դպրոցն և նոյն իսկ Զամախեցիք անձեռնհաս են թեմական դպրանոց պահել , ուստի և բանալ թեմական դպրանոցն ի Բագու , ուր ամեն բան հնարաւոր է շնորհիւ Բագուեցի ազգայնոց , ինչպէս և նոր Նախիջեւանայ թեմի դպրոցն փոխադրուելէ Քիշնեւից և Թէոդոսիայից Առաջնորդական քաղաքներից ի Նոր Նախիջեւան քաղաքն , միայն ի Բագու փո-